

Աննա Ս. Սողոմոնյան
Երևանի պետական համալսարան
annasoghomyan@ysu.am
ORCID: 0009-0000-0125-4377

**ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ**

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրվում են գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում գոյականների հոգնակի թվի կառուցվածքային և բովանդակային հարթություններում դրսևորվող ոճական իրացումները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Երեք լեզուներին բնորոշ է հոգնակիի կազմության մասնիկավորման սկզբունքը՝ համակարգային և ոչ համակարգային հոգնակերտներով, որը կարող է ուղեկցվել հիմքի վերակազմավորմամբ, հնչյունափոխությամբ և շեշտի տեղափոխությամբ: Եթե գրական արևելահայերենը բնութագրվում է հոգնակիի մասնիկավորման և հոլովական հարացույցի համեմատաբար միատարր կառուցվածքով, ապա գերմաներենն ու ռուսերենը ցուցաբերում են հոգնակիության ավելի բազմաձև կազմություն՝ թե՛ մասնիկավորման, թե՛ հոլովական հարացույցի տեսանկյունից: Վերլուծությունը ցույց է տալիս, որ երեք լեզուներում էլ հոգնակի թվակարգը երբեմն ոչ միայն որպես քանակայնության արտահայտիչ է, այլև որպես համանունների իմաստատարբերակման միջոց և բովանդակային-ոճական նրբերանգների ցուցիչ՝ արտահայտելով հուզական սաստկացում և ժամանակային անորոշություն: Այս դիտարկումները թույլ են տալիս հոգնակի թվակարգը մեկնաբանել ոչ միայն որպես

Վեմ համահայկական հանդես, ժԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

պարզ քերականական կարգ, այլև ձևաբանական և իմաստաբանական բազմաշերտ համակարգ, որը, տարբեր կերպ իրացվելով նշված լեզուներում, դառնում է ոճական հնար և բառիմաստի ընդլայնման միջոց:

Բանալի բառեր – հոգնակի թիվ, գոյական, հոգնակերտ, մասնիկավորում, հոլովական հարացույց, շեշտ, համանուն, քմայնացում, համակարգային և ոչ համակարգային հոգնակերտներ, հավաքականություն

Anna S. Soghomonyan

THE FORMATION OF THE PLURAL NUMBER OF NOUNS AND ITS SEMANTIC – FUNCTIONAL USES IN LITERARY EASTERN ARMENIAN, GERMAN, AND RUSSIAN

Abstract

This article examines the stylistic realizations, commonalities, and distinctive features of noun plural formation in Literary Eastern Armenian, German, and Russian from both structural and semantic perspectives. All three languages display a morphemic principle of plural formation, using regular and irregular plural markers, which may also be accompanied by stem restructuring, phonological alternations, and stress shifts. While Literary Eastern Armenian is characterized by a relatively uniform pattern of plural formation and a more homogeneous declensional paradigm, German and Russian demonstrate a more diverse pluralization system in terms of both morphemic marking and declensional patterns. The analysis shows that in all three languages the plural category sometimes functions not only as an expression of quantity but also as a means of distinguishing homonyms and as an indicator of semantic and stylistic nuances, conveying emotional intensification and temporal indeterminacy. These observations suggest that the plural category should be interpreted not merely as a simple grammatical feature but as a multilayered morphological and semantic system that, when realized differently across the languages under study, can serve as a stylistic device and a means of expanding lexical meaning.

Ключевые слова: множественное число, существительное, формант множественного числа, аффиксация, падежная парадигма, ударение, омоним, умлаут, продуктивные и непродуктивные форманты множественного числа, собирательность.

Մուտք

Արդի գրական արևելահայերենին, գերմաներենին և ռուսերենին բնորոշ է եզակի և հոգնակի թվակարգային բևեռների տարբերակումը, սակայն անհերքելի են դրանց տարբերությունները թե՛ կազմության և թե՛ իրացման տեսանկյուններից: Բառի եզակի թիվը, դրսևորվելով աննշույթ, բառարանային տարբերակով, արտահայտում է առարկայի՝ թվային մեկ դասիչով հանդես գալու գաղափարը, սակայն չի բացառում նաև ընդհանրական, տեսակի անվանում կամ անորոշ թվով առարկաների կամ հոգնակին բացառող երևույթների ամբողջության արտահայտումը մասնավոր դեպքերում: Վ. Ադմոնին եզակին բնութագրում է որպես թվակարգային համակարգի «բնականոն» եզր, մինչդեռ հոգնակին բնորոշ է օժանդակ ձևակերպի, մասնիկների կիրառումը (Адмони, 1986, 103): Հոգնակին՝ որպես թվակարգի նշույթավոր և քերականների կողմից «ուժեղ» բևեռ համարվող թվակարգային եզր, նշում է մեկից ավելի քանակայնություն, որը, սակայն, կարող է արտահայտել ոչ միայն քանակական, այլ նաև որակային նոր հատկանիշներ: Այդպիսիք են հավաքական գոյականները, որոնք ձևով եզակի են, բայց բառիմաստային պլանում արտահայտում են հոգնակիություն և հոգնակի բառաձևից ոճական առումով տարբերվում են առավել սերտ, միաձույլ ամբողջականություն արտահայտելու բնույթով: Այսպես, **ուսանող** գոյականի հոգնակի ձևը՝ **ուսանողներ**, թվակարգային առումով արտահայտում է անորոշ, բայց ոչ եզակի բազմություն, որի մեջ ներառված անհատները ընկալվում են որպես առանձին անձ / միավոր, իսկ **ուսանողություն** հավաքական գոյականի դեպքում առկա է եզակի բառաձևով հոգնակիության արտահայտում, որի կազմի մեջ մտնող անձինք չեն ընկալվում առանձին-առանձին, այլ կազմում են կուռ ամբողջություն:

Նույնը կարող ենք առանձնացնել ռուսերենի և գերմաներենի համար՝ уголь «ածուխ» – угли «ածուխներ», уголья/уголье «ածուխների շերտ, կույտ», գերմաներենի համար՝ der Baum «ծառ» – die Bäume «ծառեր» – das Gebäude (երրորդ տարբերակի համար հայերենում չկա համարժեք մեկ բառ, նշանակում է ծառերի մեծ քանակություն, սաղարթ, կիրառելի է հատկապես գեղարվեստական ստեղծագործություններում), der Stein «քար» – die Steine «քարեր» – das Gestein «լեռնատեսակ, ապար իմաստով»: Վ. Վինոգրադովը տարբերակում է անջատական և հավաքական հոգնակի ձևակազմություն՝ «հավաքական հոգնակիություն» բնորոշումը տարածելով ինչպես հավաքականների, այնպես էլ անեզական բառաձևերի վրա (Виноградов, 1986, 140): Հոգնակիի վերոնշյալ «անջատական» տարբերակը, երբ քերականական թիվն ու բառի իմաստային, բառային թիվը համընկնում են, Օ. Եսպերսենն անվանում է *պարզ հոգնակի* (Espersen, 1958, 177), իսկ Հ. Պետրոսյանը բնորոշում է *բուն* կամ *սովորական հոգնակի* եզրույթներով (Պետրոսյան, 1972, 43): Այս դեպքում բառի քերականական և բառիմաստային հոգնակիությունը համընկնում են: Հոգնակի թվի հաշվելի, առանձնյակներ ներկայացնող ընդհատ (discrete / դիսկրետ) հասկացությունների եզակիի դիմաց ունենք հոգնակիի թվակարգի բևեռը: Բառի ձևույթների քանակը փոխվելիս ունանք թվի կարգը համարում են բառափոխական կարգ (Зализняк, 2002, 55. Лекант, 2001, 202):

1. Գրական արևելահայերենի, գերմաներենի և ռուսերենի հոգնակի թվի կազմության համակարգային և ոչ համակարգային մասնիկավորման տեսակները

Գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում հոգնակի թիվն արտահայտվում է առավելապես բառահարաբերական ձևույթներով: Արևելահայերենում այդ գործառնությունը կատարում են **-եր**, **-ներ**, **-ք**, **-իկ** մասնիկները, որոնցից **-եր** և **-ներ** վերջավորությունները հոգնակիի կազմության համակարգային, բնականոն ձևեր են դիտվում: Գերմաներենում առանձնացվում է հոգնակերտների **-e**, **-(e)n/-n**, **-er**, **-s** շարքը և գրոյական վերջավորությունը: Վերջավորության հավելումը երբեմն ուղեկցվում է շեշտի տեղափոխությամբ և բառահիմքի **a**, **o**, **u** ձայնավորների քմայնացմամբ, երբեմն էլ դրսևորվում է առանց քմայնացման:

Վե՛ր համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

Ռուսերենում հոգնակի թվակարգի համակարգային մասնիկներն են՝ -ы/-и, -а/-я, իսկ ոչ համակարգային՝ -ья:

Գոյականի վանկաքանակությունն է պայմանավորում վերջինիս՝ **-եր** կամ **-ներ** մասնիկավորմամբ հոգնակի կազմության ընտրությունը: Գրական արևելահայերենում այս սկզբունքը դարձել է օրինաչափ՝ միավանկ և բարդության վերջնաբաղադրիչ միավանկ բառերը հոգնակիում ստանում են **-եր**: Հին հայերենում բառի ուղիղ ձևում **-ն**-ով ավարտվող գոյականները արդի գրական արևելահայերենում հոգնակի կազմության ժամանակ **-եր**-ից առաջ այդ **-ն**-ն վերականգնում են, ինչպես՝ **գառներ, ձկներ, հարսներ, լեռներ, ծոռներ, թոռներ, բեռներ, դռներ**: Այս բառերի կողքին կան նաև գոյականներ, որոնք, գրական արևելահայերենին անցնելով գրական ճանապարհով, հոգնակին կազմում են առանց վերջնահանգի **-ն** բաղաձայնի, միայն **-եր** մասնիկով, ինչպես՝ **անձն – անձ – անձեր** (նաև՝ **անձինք**), **սերմն – սերմ – սերմեր, ռունգն – ռունգ – ռունգեր, մասն – մաս – մասեր**: Միավանկ գոյականների շարքում բացառություն են կազմում **մյուս** և **ոուս** բառերը, որոնք հոգնակիում ստանում են **-ներ** մասնիկավորում: **Ռուս** գոյականի դեպքում երևույթը բացատրվում է բարբառային արտասանությամբ՝ բուուս / ոուուս: Հոգնակին **-եր** մասնիկավորմամբ են կազմում նաև մեկուկես վանկանի (մեկ լիահունչ և մեկ գաղտնավանկ) բառերը: Այս դեպքում, պայմանավորված այն հանգամանքով՝ գաղտնավանկը հաջորդում, թե նախորդում է լիահունչ վանկին, գոյականի հոգնակի թիվը կազմվում է **-եր** (լրիվ վանկ + կես վանկ՝ **կայսր-կայսրեր, վագր-վագրեր, ոսկր-ոսկրեր**) կամ **-ներ** (կես վանկ + լրիվ վանկ) **սլաք-սլաքներ, ցրիչ-ցրիչներ, խրատ-խրատներ, սխալ-սխալներ**) հոգնակերտ մասնիկներով: Բազմաքանակ բաղադրյալ բառերի դեպքում հոգնակի ձևակազմության երկու տարբերակ է առանձնացվում: Եթե բառի վերջին բաղադրիչը միավանկ գոյական է, որ գործածվում է իր բուն, առարկայական իմաստով, ստանում է **-եր** հոգնակերտ մասնիկը, ինչպես՝ **ցուցափեղկ-ցուցափեղկեր, հանքահոր-հանքահորեր**, իսկ այն գոյականները, որոնց միավանկ վերջին բաղադրիչը կրում է դերբայական, բայական իմաստ և ունի մի բան անողի, կատարողի նշանակություն, ստանում է **-ներ** մասնիկը, ինչպես՝ **բանասեր-բանասերներ, կարգախոս-կարգախոսներ, պատմագետ-պատմագետներ**:

Հոգնակիությունը գերմաներենում ենթադրում է գոյականի սեռային տարբերությունների ձևաբանական չեզոքացում և համապատասխան der (ար.), die (իգ.), das (չեգ.) սեռանիշ որոշյալ հոդերի փոխարինում միայն

Գերմաներենի մյուս հոգնակերտը *-en/-n* վերջավորությունն է: Այս մասնիկավորմամբ հոգնակի են կազմում իգական սեռի բազմավանկ և միավանկ գոյականների մեծ մասը, ինչպես՝ *die Übung* «վարժություն» – *die Übungen* «վարժություններ», *die Frau* «կին» – *die Frauen* «կանայք», *die Tafel* «գրատախտակ» – *die Tafeln* «գրատախտակներ», *die Blume* «ծաղիկ» – *die Blumen* «ծաղիկներ», *die Tür* «դուռ» – *die Türen* «դռներ», ինչպես նաև փոխառյալ *-age, -ät, -anz, -enz, -ie, -ik, -ion, -ur* վերջածանցներով բառերը, ինչպես՝ *die Etage* «հարկ» – *die Etagen* «հարկեր», *die Universität* «համալսարան» – *die Universitäten* «համալսարաններ», *die Kategorie* «դասակարգ» – *die Kategorien* «դասակարգեր» և այլն: Այս վերջավորությամբ են հոգնակին կազմում արական սեռի *der Staat* «պետություն» – *die Staaten* «պետություններ», *der Schmerz* «ցավ» – *die Schmerzen* «ցավեր» և այլն, ինչպես նաև չեզոք սեռի մի խումբ գոյականներ՝ *das Auge* «աչք» – *die Augen* «աչքեր», *das Ohr* «ականջ» – *die Ohren* «ականջներ», *das Hemd* «շապիկ» – *die Hemden* «շապիկներ» և այլն: *-on* վերջածանցն ունեցող արական և չեզոք սեռի որոշ գոյականներ՝ *der Dämon* «դև» – *die Dämonen* «դևեր», *das Photon* «լուսամասնիկ, ֆոտոն» – *die Photonen* «ֆոտոններ», *das Elektron* «էլեկտրոն» – *die Elektronen* «էլեկտրոններ», արական սեռի *-or* վերջածանցով գոյականները, ինչպես *der Doktor* «դոկտոր (գիտ. աստիճան ունեցող անձ)» – *die Doktoren* «դոկտորներ», համանման մասնիկավորմամբ են հոգնակին կազմում նաև հետևյալ փոխառությունները՝ *der Direktor* «տնօրեն», *der Faktor* «գործոն», *der Professor* «պրոֆեսոր», *der Reflektor* «անդրադարձիչ, լուսարձակ», *der Transformator* «հասանքափոխարկիչ»: Հոգնակին *-en* մասնիկավորմամբ են կազմում արական սեռի *-loge, -ant, -ent, -ist, -at, -nom, -et, -ismus* վերջավորություններով փոխառությունները՝ *der Demonstrant* «ցուցարար» – *die Demonstranten* «ցուցարարներ», *der Kandidat* «թեկնածու» – *die Kandidaten* «թեկնածուներ», *der Philosoph* «փիլիսոփա» – *die Philosophen* «փիլիսոփաներ», *der Organismus* «օրգանիզմ» – *die Organismen* «օրգանիզմներ»:

Այն գոյականները, որոնք ավարտվում են *-er, -en, -el* (ար. սեռ), *-chen, -lein, -sel, -er, -en, -el* (չեզոք սեռ) մասնիկներով, հոգնակին հիմնականում կազմում են առանց վերջավորության՝ արմատական ձայնավորի քմայնացմամբ կամ առանց քմայնացման (*der Apfel* «խնձոր» – *die Äpfel* «խնձորներ», *der Schatten* «ստվեր» – *die Schatten* «ստվերներ», *das Büchlein* «գրքույկ» – *die Büchlein* «գրքույկներ», *das Kissen* «բարձ» – *die Kissen* «բարձեր»): այս դեպքում ուղղական, սեռական, հայցական հոլովներում հոգնակի թվի ամբողջ բեռնվածությունը ընկնում է որոշյալ հոդի վրա և միայն տրական հոլովում

ստանում են –n մասնիկը: Ասվածը ցույց տանք հոլովական հարացույցով՝ der Lehrer «ուսուցիչ» – հոգնակի թվում՝ Nom. (ուղղ.) – die Lehrer «ուսուցիչներ», Gen. (սեռ.) – der Lehrer «ուսուցիչների», Dat. (տր.) – den Lehrem «ուսուցիչներին», Akk. (հայց.) – die Lehrer «ուսուցիչներին»: Հարացույցի պատկերը փաստում է, որ միայն որոշյալ հոդի հոլովական տարբերակներն են արտացոլում հոգնակիությունը: Իգական գոյականները, որոնք ավարտվում են –in վերջածանցով, հոգնակի մասնիկավորման ժամանակ կրկնապատկում են –n վերջնաբաղադրիչը, ինչպես՝ die Lehrerin «ուսուցչուհի» – die Lehrerinnen «ուսուցչուհիներ»: Առանց վերջավորության են հոգնակիում հանդես գալիս նաև ge- նախածանցով և –e վերջածանցով գոյականները, ինչպես՝ das Gebäude «շենք» – die Gebäude «շենքեր, շինություն»:

Հոգնակիի կազմության երրորդ խումբը ներառում է արական և չեզոք սեռի միավանկ գոյականների մի մասը, որոնք ստանում են –er հոգնակերտ մասնիկը՝ արմատական ձայնավորի / երկբարբառի քնայնացմամբ կամ առանց դրա, ինչպես՝ der Wald «անտառ» – die Wälder «անտառներ», das Dach «կտուր» – die Dächer «կտուրներ», das Lied «երգ» – die Lieder «երգեր», das Kloster «մենաստան» – die Klöster «մենաստաններ»:

Ռուսերենում գոյականի հոգնակի թվակարգի կազմությունը որոշ դեպքերում կարող է ուղեկցվել հիմքի հնչյունների հերթագայությամբ, ինչպես՝ сосед [saset] «հարևան» – соседи [sased'i] «հարևաններ» ([t]/[d']), друг «ընկեր» [druk]– друзья [druz'ja] «ընկերներ» (k//z'), ածանցի անկմամբ՝ гражданин «քաղաքացի» – граждане «քաղաքացիներ», հիմքի ածմամբ՝ сын «որդի» – сыновья «որդիներ», дочь «դուստր» – дочери «դուստրեր», շեշտի տեղափոխությամբ և հնչյունների հերթագայությամբ՝ озеро [ó'zerə] «լիճ» – озера [aze'ra'] «լճեր» ([o//a], [ə//a]), տարարմատությամբ՝ человек «մարդ» – люди «մարդիկ»: Ռուս քերականները տարբերակում են հոգնակիի ձևամասնիկներ (формант), որոնց մեջ են մտնում և՛ հոլովական վերջավորությունները, և՛ միջանկյալ ձևույթները, երբ դրանք կանոնավոր կերպով կապվում են բազմակի թվի իմաստի հետ (Зализняк, 2002, 545. Виноградов, 1986, 61):

Հոգնակի համակարգային թվակազմության մասնիկներ են համարվում այն վերջավորությունները, որոնց միջոցով ռուսերենում կազմվում են գոյականների մեծ մասի հոգնակի ձևերը: Իգական սեռի գոյականների մեծ մասի համար ուղղական հոլովի հոգնակին սովորաբար ձևավորվում է –ы/-и վերջավորությամբ, օր.՝ книга «գիրք» – книги «գրքեր», девушка «աղջիկ» – девушки «աղջիկներ», ночь «գիշեր» – ночи «գիշերներ», իսկ մի

Վեդ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

շարք դեպքերում կազմվում է հիմքի ընդարձակմամբ, օր.՝ дочь «դուստր» – дочери «դուստրեր», мать «մայր» – матери «մայրեր»: Չեզոք սեռի գոյականների մեծ մասի ուղղական հոլովի հոգնակին ձևավորվում է *-a/-я* վերջավորությամբ, ինչպես՝ окно «պատուհան» – окна «պատուհաններ», море «ծով» – моря «ծովեր», поле «դաշտ» – поля «դաշտեր»: Կազմությամբ պարզ արական սեռի գոյականների մեծ մասի համար ուղղական հոլովի հոգնակին նույնպես ձևավորվում է համակարգային *-ы/-и* վերջավորությամբ, ինչպես՝ стол «սեղան» – столы «սեղաններ», завод «գործարան» – заводы «գործարաններ», фильм «ֆիլմ» – фильмы «ֆիլմեր»: Որոշ դեպքերում հոգնակի թվի կազմությունը կարող է ուղեկցվել նաև հիմքի հնչյունների հերթագայությամբ, ինչպես՝ друг «ընկեր» – друзья «ընկերներ» (k // z'):

Համակարգային մասնիկավորմանը զուգահեռ՝ ուսումնասիրվող երեք լեզուներում առկա են նաև ոչ համակարգային հոգնակերտներ: Գրական արևելահայերենում, համակարգային **-եր**, **-ներ** հոգնակերտ մասնիկներից բացի, կիրառվում է նաև գրաբարից անցած **-ք**-ն՝ դառնալով **-ի** վերջածանց ունեցող բառերի դեպքում հոգնակիակազմության միջոց, ինչպես՝ **տեղացի** – **տեղացիք**, **գյուղացի** – **գյուղացիք**, իսկ հետագայում ենթարկվելով իմաստային տարբերակման՝ կիրառվել որպես բառակազմական ածանց՝ **գիրք**, **խոսք**, **միտք** և այլն: Այս մասնիկն առավելապես հատուկ է ժողովրդախոսակցական ոճին և կիրառվում է **-ացի**, **-եցի**, **-ցի** վերջածանցներով գոյականների հոգնակի թվակազմության դեպքում: Ոչ համակարգային **-իկ**, **-այք** հոգնակերտները՝ **մարդիկ**, **տիկնայք**, **պարոնայք**, մասամբ ունեն հավաքականության իմաստ: Հոգնակերտ **-անք**, **-ենք**, **-ունք**, **-ոնք** (միավանկ ազգակցական անունների և ստացական դերանունների դեպքում) ձևային կերպով հիմնականում բնորոշ են հատուկ անուններին, անձնանուններին, անձերի հարաբերություն նշող բառերին, ընդ որում՝ այս համանուններն ունեն իմաստատարերակիչ նրբերանգ: Այսպես՝ ստանալով **-անք** մասնիկավորում՝ բառաձևերը նշում են կողմնակից, համախոհ անձանց, ինչպես՝ **Վարդանանք**, **-ենք** հոգնակիաձև բառերն ունեն առավելապես ազգակցային բովանդակություն, իսկ **-ոնք**-ը՝ մերձավորներին, յուրայիններին առանձնացնող իմաստ ունի, ինչպես՝ **Սամվելենք**, **Գրիգորենք**, **Ադոնք**, **պապոնք** և այլն: Այս հոգնակերտ ձևայինների բովանդակային ծածկույթը հստակորեն տարբերվում է հոգնակիի մյուս մասնիկներից: **Սամվել** անձնանվան հոգնակին ոչ թե նշանակում է «շատ Սամվելներ», այլ Սամվելի յուրայիններ, համախոհներ կամ ազգակիցներ (Աբրահամյան, Պառնասյան, Օհանյան, 1974, 54): Անձ-

նանունների համանման իրացումներ նկատելի են նաև ռուսերենում, օր.՝ *Иваны, Форсайты*: Նման կիրառությունը խորթ չէ նաև գերմաներենին, երբ նշվում է/են տոհմը կամ ընտանիքի անդամները՝ միասին, օր.՝ *Müllers* «Մյուլլերները»:

Հոգնակերտ մասնիկները նույն արժեքայնությունը չունեն, քանի որ **-իկ**, **-այք** վերջավորությունները դեռ պահպանում են հավաքականության հնչերանգը, իսկ **-անք**, **-ենք**, **-ոնք** հոգնակիի կազմության վերջավորություններն ունեն բովանդակային որոշակի սահմանափակում և հավաքականության դրսևորումներ:

Գերմաներենում ոչ համակարգային մասնիկավորման երևույթն առավել բազմազան բնույթ ունի: Այսպես. փոխառյալ մի շարք բառերի դեպքում հոգնակերտ **-en** մասնիկից առաջ ավելանում է **-i** ձայնավորը՝ *das Prinzip* «սկզբունք» – *die Prinzipien* «սկզբունքներ»: Չեզոք սեռի **-um/-ium** վերջածանցներով փոխառությունների դեպքում, նախքան **-en** հոգնակիի վերջավորության ավելացումը, սղվում է վերջածանցի **-u-ն**՝ *das Zentrum* «կենտրոն» – *die Zentren* «կենտրոններ», նույն կերպ՝ *das Datum* «ամսաթիվ» – *die Daten* «ամսաթվեր», *das Museum* «թանգարան» – *die Museen* «թանգարաններ», *das Gremium* «հանձնաժողով» – *die Gremien* «հանձնաժողովներ»: Այն գոյականները, որոնց վերջին բաղադրիչը *Mann* «տղամարդ» գոյականն է, հոգնակին կազմում են երկու տարբերակով՝ յուրաքանչյուրին առանձին նշելու դեպքում բառին ավելանում է **-männer**, իսկ ընդհանուր խումբ, կարգ, դաս նշելու պարագայում **-leute** «մարդիկ» բառը, այսպես՝ *der Ehemann* «ամուսին» – *die Ehemänner* «ամուսիններ», բայց *der Fachmann* «մասնագետ» – *die Fachleute* «մասնագետներ»: Օտար, հատկապես լատիներենից, հունարենից, անգլերենից և ֆրանսերենից փոխառյալ գոյականների զգալի մասը, որոնք ավարտվում են ոչ շեշտակիր, սակայն լիաձայն հնչյունով (բացառություն են կազմում **-e** ձայնավորով (*Schwa – Laut*) ավարտվող բառերը), ինչպես նաև որոշ հապավումներ հոգնակիում ստանում են **-s** մասնիկավորում, ինչպես՝ *das Sofa* «բազմոց» – *die Sofas* «բազմոցներ», *das Detail* «մանրամասնություն» – *die Details* «մանրամասներ», նույն կերպ՝ *das Hotel* «հյուրանոց», *das Plateau* «սարահարթ, բարձրավանդակ», *der Refrain* «հանգերգ, կրկներգ», *das Repertoire* «խաղացանակ», *die Saison* «եղանակ», *das Meeting* «հանդիպում», *der Shop* «խանութ», *der/die Single* «միայնակ», *das Ticket* «տոմս» և այլն: Այս վերջավորությամբ են հոգնակին կազմում նաև անձնանունները, *Müller* «Մյուլլեր» – *Müllers* «Մյուլլերները», ինչպես նաև հապավումները՝ *der LKW* «բեռնատար» – *die LKWs*

Վեյն համահայկական հանդես, ժԸ (ԻԴ) փարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

«բեռնատարներ», –on վերջածանցով արական և չեզոք սեռի գոյականների մի մասը՝ *der Bonbon* «կոնֆետ» – *die Bonbons* «կոնֆետներ», նույն կերպ՝ *der Jargon* «ծածկալեզու», *der Kupon* «կտրոն», *der Champignon* «հաղթող», *das Medaillon* «կախազարդ»:

Ը. Վեգեներն այդ երևույթը բնութագրում է «թափանցիկ հոգնակիություն» արտահայտությամբ, քանի որ հոգնակիի այս կազմությունը պահպանում է նախնական և աննշույթ եզակիի բառածևը, ի տարբերություն *der Bach* [ˈbax] «առու» – *die Bäche* [ˈbɛçə] «առուներ», որտեղ հոգնակիի կազմությունն ի հայտ է բերել արմատական ձայնավորի քմայնացում, ինչպես նաև *ch* բաղաձայնների շփականացում, որի հետևանքով հոգնակերտ մասնիկ –e-ի հետ կազմել է նոր վանկ (*Wegener*, 2002, 275): Որոշ քերականներ, սակայն, հոգնակերտ –s մասնիկը դիտում են որպես համակարգային հոգնակիի կազմության առավել կենսունակ ու օրինաչափ տարրերակ (*Eisenberg*, 2013, 159):

Հոգնակի թվի առանձնահատուկ ձևակազմություն ունեն –ma վերջածանցով գոյականները. մի դեպքում հոգնակի թիվը կազմվում է վերջնաբաղադրիչի տղմամբ և –en մասնիկավորմամբ, ինչպես՝ *das Drama* «դրամա» – *die Dramen* «դրամաներ», նույն կերպ՝ *das Dogma* «դավանանք», *die Firma* «ֆիրմա», *das Prisma* «հատվածակողմ, պրիզմա», *die Villa* «առանձնատուն», նույն կերպ նաև՝ *das Konto* «հաշիվ, հաշվեհամար» – *die Konten* «հաշվեհամարներ» (երբեմն նաև՝ *die Kontos*), *das Epos* «էպոս» – *die Epen* «էպոսներ», –us վերջավորության տղմամբ՝ *der Zyklus* «շրջափուլ» – *die Zyklen* «շրջափուլեր», մեկ այլ դեպքում –i ոչ համակարգային մասնիկավորում են ստանում քերականական որոշ եզրույթներ՝ *der Modus* «քեր. եղանակ» – *die Modi* «քեր. եղանակներ», *der Numerus* «թիվ» – *die Numeri* «թվեր»: Համանման վերջածանցով, սակայն հոգնակիի ուրույն կազմությամբ առանձնանում են *das Tempus* «քեր. ժամանակ» – *die Tempora* «ժամանակներ», *das Genus* «սեռ» – *die Genera* «սեռեր», *der Terminus* «եզրույթ» – *die Termini* «եզրույթներ» գոյականները: Գոյականների սահմանափակ թվի դեպքում հոգնակիի թվի կազմությունն իրացվում է վերջնավանկի տղմամբ և *a* ձայնավորի ավելացմամբ, ինչպես *das Abstraktum* «վերացականություն» – *die Abstrakta* «վերացականություններ», *das Neutrum* «չեզոք սեռ», *das Visum* «վիզա» – *die Visa* «վիզաներ», *das Minimum* «նվազագույն, մինիմում» – *die Minima* «մինիմումներ», *das Maximum* «առավելագույն, մաքսիմում» – *die Maxima* «մաքսիմումներ»: Հետևյալ բառաշարքի մոտ հոգնակի թվակարգի դեպքում, վերջավորության հավելումից բացի, նկատելի է նաև վերջին

Studierenden «սովորողներ», իսկ բովանդակային պլանում՝ համատեքստի մյուս անդամների հոգնակի կազմությունն ու համաձայնեցումը: Ռուսերենում գոյականացած ածականներն ու դերբայները կազմում են ռուսերենի հոլովման առանձին ենթախումբ: Չնայած հանդես են գալիս որպես գոյականներ՝ վերջիններիս հոլովական համակարգն ամբողջությամբ համընկնում է լիաձև ածականների և դերբայների հոլովման հետ: Հոգնակի թիվը կազմվում է ածականական համակարգային վերջավորություններով *-ые/-ие*, օր.՝ *нищий* «մուրացիկ» – *нищие* «մուրացկաններ», *прачечная* «վլացքատուն» – *прачечные* «վլացքատներ»:

Հոգնակի թիվը, այսպիսով, աչքի է ընկնում հավաքականության, թվի առումով ոչ եզակի, բայց անորոշ քանակայնության, սեռի կարգի չեզոքության, օր.՝ *армянин* «հայ» – *армяне* «հայեր» (բացառություն են կազմում սեռական և ուղղական(–հայցական) հոլովների որոշ իրացումներ), – *а*, *-ья* վերջածանցները արական և չեզոք սեռի գոյականների համար, *-ы*, *-и* և՛ արական, և՛ իգական, իսկ որոշ դեպքերում *-ко*, *-це* վերջավորության անշեշտ լինելու դեպքում չեզոք սեռի համար ևս, օր.՝ *колечки* «մատանիներ, մատանյակներ», *книги* «գրքեր», *очки* «ակնոցներ», եզակիի անհատականության դրսևորումներով (Виноградов, 1986, 126):

2. Վանկայնորեն փոփոխված հիմքեր, քմայնացում և շեշտի փոփոխություն

Ձուգադրվող երեք լեզուներում հոգնակիի կազմությունը երբեմն ուղեկցվում է հիմքի վերակազմավորմամբ, հնչյունափոխությամբ և շեշտի տեղափոխությամբ: Գրական արևելահայերենում տարբերակելի են վանկայնորեն չվերակազմավորված հիմքեր, երբ եզակի բառաձևը նույնությամբ պահպանվում է հոգնակի թվում, ինչպես՝ **քաղաք–քաղաքներ**, և վերակազմավորված հիմքեր, երբ հոգնակիում փոխվում է բառի վանկաքանակը՝ պայմանավորված հիմքավերջի վանկի կառուցվածքով և վանկաքնի վերջանեզրի տեղաշարժով՝ **կայսր – կայսրեր**: Այլ կերպ՝ հոգնակի **կայսրեր** ձևում տեղի է ունենում մեկուկես վանկանի **կայ–ս(ը)ր** բառաձևի երկրորդ վանկի **ը**-ի սղում, որի արդյունքում երկրորդ վանկի **ս**-ն հոգնակի ձևում անցնում է առաջին վանկին, իսկ **ր**-ն՝ երկրորդ վանկին, ըստ այդմ՝ հոգնակիի ձևը դառնում է լիարժեք երկվանկ բառ: Այս պարագայում խախտվում է վանկաքանակությունը, վերջինս ընկալվում է որպես

միավանկ բառաձև և ստանում համապատասխանաբար՝ **–եր** հոգնակերտ մասնիկը: Գրական արևելահայերենը տարբերակում է անհնչյունափոխ հիմքեր, ինչպես՝ **աշակերտ – աշակերտներ**, երբ եզակի բառաձևն իր բաղաձայնական կամ ձայնավորական կազմով նույնությամբ պահպանվում է հոգնակի բառաձևում և հնչյունափոխված հիմքատարբերակներ, ինչպես՝ **գիր – գրեր, թուղթ – թղթեր** (Պետրոսյան, 1972, 19): Միավանկ բառերը, որոնք արմատի կազմում ունեն **ա, ո** կամ **ե** ձայնավոր, հոգնակի թիվը կազմում են անհնչյունափոխ, իսկ **ի** կամ **ու** ձայնավոր ունեցող բառերը հնչյունափոխ տարբերակով, ինչպես՝ **սար – սարեր, գող – գողեր, զենք – զենքեր**, բայց **լիճ – լճեր, թուղթ – թղթեր** և այլն: Արմատական ձայնավորի փոփոխությունը **ու/ի** ձայնավորների դեպքում, սակայն, բնորոշ է ոչ միայն հոգնակի թվի կազմությանը, այլ նաև դրսևորվում է եզակի թվի հոլովական հարացույցում՝ **լիճ – լճի – լճի(ս) – լճից – լճով – լճում**: Այդուհանդերձ վերոնշյալ կանոնը չի տարածվում բացարձակապես բոլոր միավանկ գոյականների վրա. որոշ բառերի դեպքում հնարավոր են երկձևություններ, ինչպես՝ **խուրձ – խուրձի/խրձի, խրձեր/խուրձեր**: Մի խումբ գոյականների դեպքում երկձև կիրառումը տարածվում է միայն հոգնակի բառաձևերի վրա, ինչպես՝ **թումբ – թմբի, իսկ հոգնակիում՝ թմբերի/թումբերի**: Գոյականների որոշ մասն էլ անհնչյունափոխ է մնում թվակազմության երկու՝ եզակի և հոգնակի բևեռներում, ինչպես՝ **ձիգ – ձիգի – ձիգեր**: Հնչյունափոխությունները ինքնուրույն իմաստային արժեք չունեն: Վերջիններս Գ. Զահուկյանը բնորոշում է որպես «հավելուրդային», որոնք ծառայում են միայն «մաքուր» և «ձևավոր» հիմքերի տարբերակմանը, իսկ թվային բուն վերջավորություններն ավելանում են ձևավոր հիմքերին (Զահուկյան, 1974, 173):

–ի վերջնաբաղադրիչով անհնչյունափոխ և **ու > վ** հնչյունափոխությամբ բառերն ունեն հոգնակիի հետևյալ կազմությունը՝ **թի – թիի – թիեր, ձի – ձիու/ձիի – ձիեր, լու – լվի – լվեր, բու – բուի/բվի – բվեր/բուեր**:

Հոգնակիի առավել միատարր և օրինաչափ կազմությամբ են առանձնանում բազմավանկ գոյականները՝ ստանալով **–ներ** մասնիկավորումը՝ առանց արմատական ձայնավորի փոփոխության, ինչպես՝ **նկար – նկարներ, քաղաք – քաղաքներ**: Բացառություն են կազմում, սակայն, **երկիր** և **սկիզբ** բառերը, որոնք հոգնակիում կրում են **ի → ը** հնչյունափոխությունը՝ կազմելով **երկիր – երկ(ը)րներ**, իսկ **սկիզբ – սկիզբներ** բառի դեպքում հնչյունափոխությունը դրսևորվում է թեք հոլովաձևերում՝

Վե՛ր համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) փարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

սկ(ը)գբներին, սկ(ը)գբներից, սկ(ը)գբներում: Գրական արևելահայերենի բառային շեշտը կայուն–շարժական է և անցնում է ավելացված վերջին վանկին՝ առանց ինաստային տեղաշարժեր կատարելու: Օր.՝ **աշակերտ – աշակերտներ, պարոն – պարոնայք:**

Գերմաներենի հոգնակի ձևերի մեծամասնության դեպքում շեշտն առաջընթեր է. պահպանում է իր սկզբնական դիրքը՝ դրվելով գոյականի արմատական ձայնավորի վրա, իսկ հոգնակերտ մասնիկները (–e, –er, –(e)n, –s) մնում են չշեշտված: Այս կանոնից շեղվում են օտար, հատկապես լատինական և հունական ծագում ունեցող բազմաձայն արական գոյականները, երբ հոգնակի բառաձևերում երբեմն դիտվում է շեշտի տեղաշարժ (օր. der Dóktor «դոկտոր, գիտ. աստիճան» – die Doktóren «դոկտորներ», der Proféssor «պրոֆեսոր» – die Professóren «պրոֆեսորներ», der Fáktor «գործոն» – die Faktóren «գործոններ»):

Գերմաներենում թե՛ միավանկ, թե՛ բազմաձայն գոյականների դեպքում հոգնակի թվի կազմությունը կարող է ուղեկցվել արմատական ձայնավորի քմայնացմամբ (ուվաուտ a, o, u → ä, ö, ü), ինչպես՝ der Arzt «բժիշկ» – die Ärzte «բժիշկներ», der Hof «բակ» – die Höfe «բակեր», der Kuss «համբույք» – die Küsse «համբույքներ», der Antrag «առաջարկ» – die Anträge «առաջարկներ», die Hand «ձեռք» – die Hände «ձեռքեր», die Wand «պատ» – die Wände «պատեր»):

Ռուսերենին հատուկ է բառի շարժական շեշտը, երբ շեշտը, նախավերջին վանկից անցնելով վերջին վանկին, կարող է իրականացնել իմաստատարբերակիչ գործառույթ, կա՛մ ուղեկցվել հնչյունական կազմի փոփոխությամբ՝ за́мок [zamək] «դղյակ» – замо́к [zamók] «կողպեք», կա՛մ չուղեկցվել՝ му́ка [мука] «տառապանք» – мука́ [мука] «ալյուր» (Нестерова, 2010, 40):

Մի խումբ գոյականների դեպքում հոգնակերտ մասնիկավորումը զուգակցվում է շեշտի դիրքի տեղափոխությամբ, ինչպես по́езд «գնացք» – поезда́ «գնացքներ», глyбина́ «խորք, խորություն» – глyбiны «խորքեր, խորություններ», де́рево «ծառ» – дере́вья «ծառեր», о́зеро «լիճ» – озéра «լճեր», по́ле «դաշտ» – поля́ «դաշտեր», го́род «քաղաք» – города́ «քաղաքներ», плéчо «ուս» – плечи́ «ուսեր», իսկ միջակա շեշտ կրող չեզոք սեռի գոյականների շեշտն անփոփոխ է մնում՝ свети́ло «լուսատու մարմին» – свети́ла «լուսատու մարմիններ»):

3. Հոլովական հարացույցի առանձնահատկությունները հոգնակի թվակազմության հայեցակետից

Եթե գրական արևելահայերենում գոյականները եզակի թվում հոլովական ձևերը կազմավորում են տարբեր հիմքերից՝ հնչունափոխ (հերթագայական) և անհնչունափոխ, վերջավորությունների հավելումով կամ առանց վերջավորության, ինչպես՝ **տուն – տան, օր – օրվա, գինի – գինու, աշակերտ – աշակերտի**, ապա հոգնակի թիվը դրսևորում է առավել միատարր կազմություն և թվակազմական օրինաչափություններ, որի հետևանքով եզակի թվի վերոնշյալ տարբերությունները վերանում են ու ստանում ընդհանրական մասնիկավորում՝ **տներ, օրեր, գինիներ, աշակերտներ**:

Գերմաներենում թույլ և խառը հոլովման են պատկանում գոյականների հետևյալ խմբերը՝ արական սեռի –e մասնիկով ավարտվող գոյականները՝ der Junge «երիտասարդ», der Kollege «գործընկեր», der Kunde «հաճախորդ», der Russe «ռուս», der Löwe «առյուծ», der Rabe «ազնավ», մի խումբ միավանկ գոյականներ՝ der Mensch «մարդ», der Herr «պարոն», der Held «հերոս», der Hirt «հովիվ» և այլն, ինչպես նաև օտար ծագում ունեցող հետևյալ վերջածանցներով գոյականները՝ der Student «ուսանող», der Aspirant «հայցորդ», der Komponist «երգահան», der Agronom «գյուղատնտես», der Doktorand «ասպիրանտ», der Diplomat «դիվանագետ», der Poet «բանաստեղծ», der Patriot «հայրենասեր», der Philosoph «փիլիսոփա», der Fotograf «լուսանկարիչ», der Biolog(e) «կենսաբան»: Այս բառաշարքերը կրում են հոլովական հարացույցի հետևյալ առանձնահատկությունը. բացի ուղղականից, մյուս հոլովներում թույլ հոլովման պատկանող գոյականը եզակի թվում ստանում է –en մասնիկավորում, որը պահպանվում է նաև հոգնակի թվում. դրա հետևանքով կազմության տեսանկյունից զրոյանում են եզակիի և հոգնակիի տարբերությունները: Այդ տարբերությունը պահպանվում է միայն բովանդակային պլանում, ինչպես՝ „Bester Freund, was ist das Herz des Menschen!“ («Լավագույն ընկեր, ի՞նչ է մարդու սիրտը»– թարգմ. Ա.Ս.) (Goethe, 1774):

„Gewiß, du hast recht, Bester, der Schmerzen wären minder unter den Menschen, wenn sie nicht –Gott weiß, warum sie so gemacht sind! – mit so viel Emsigkeit der Einbildungskraft sich beschäftigten, die Erinnerungen des vergangenen Übels zurückzurufen, eher als eine gleichgültige Gegenwart zu ertragen.“ («Անշուշտ, դու իրավացի ես, բարեկամս. մարդկանց մեջ ցավերը նվազ կլինեին, եթե

Վեդ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

նրանք – Աստված գիտե, ինչո՞ւ են այսպես ստեղծված, – այդքան եռանդով իրենց երևակայությամբ չվերակենդանացնեին անցած չարիքների հիշողությունները՝ պարզապես համբերությամբ տանելու փոխարեն իրենց անգույն ներկան»– թարգմ. Ա.Ս.) (Goethe, 1774):

Արական սեռի գոյականների մի խումբ (der Name «անուն», der Same «սերմ», der Wille «կամք», der Gedanke «միտք», der Glaube «հավատ/հավատք», der Buchstabe «տառ») ենթարկվում է հատուկ հոլովման. եզակի թվի սեռական հոլովում ստանում է -(e)ns հոլովիչը, իսկ մյուս հոլովներում, բացի ուղղականից, -en/-n մասնիկավորումը: Այս վերջավորությունը պահպանվում է նաև հոգնակի թվում, որը ևս հանգեցնում է, բացի տրական հոլովից, հոլովական հարացույցի մնացյալ անդամների կազմության միատարրության: Այդ դեպքում թվակարգի տարբերական բեռնվածությունը մնում է իմաստային կողմի, համատեքստի, վերջինիս անդամների համաձայնեցման և մասամբ որոշյալ դերանվան վրա: Եթե գրական արևելահայերենում և ռուսերենում գոյականների հոգնակի թվի կազմությունը հիմնված է առավելապես միատարր ձևաբանական համակարգի վրա (հստակ համակարգային վերջավորությունները գործարկվում են որպես հիմք, որի վրա հաջորդաբար ձևավորվում են հոլովական մասնիկները), ապա գերմաներենում գոյականը բառարանում ներկայացվում է հոգնակի բառաձևով՝ եզակիի կողքին՝ որպես տվյալ բառին հատուկ հոգնակի ձևակազմություն: Ռուսերենի հոլովական համակարգում հոգնակի թվի ձևերի իրացումը ընդհանուր առմամբ ավելի պարզ և միատար է, քան եզակի թվի դեպքում, սակայն հատկապես հոգնակի թվի սեռական հոլովում տիպաբանական տարբերությունները բավական հստակ են արտահայտված: Վ. Վինոգրադովի տարբերակմամբ կարելի է պայմանականորեն առանձնացնել հետևյալ երեք հիմնական խմբերը.

1. Ուղղական հոլով, հոգնակի թիվ՝ -ы, -а, -и → սեռական հոլով, հոգնակի թիվ՝ -ов, -ев, -ьев, օր.՝ берег «ափ» – берега «ափեր» – берегов «ափերի», герой «հերոս» – герои «հերոսներ» – героев «հերոսների», лист «տերև» – листья «տերևներ» – листьев «տերևների», ինչպես նաև ոչ համակարգային -ья ձևով հոգնակի ունեցող գոյականները, որոնց սեռական հոգնակին կազմում է -ьев/-ев, օր.՝ стул «աթոռ» – стулья «աթոռներ» – стульев «աթոռների»:

2. Ուղղական հոլով, հոգնակի թիվ՝ -ы, -и, -ья, -ия → սեռական հոլով՝ գրոյական վերջավորություն (ø) կամ -ей, օր.՝ жена «կին» – жены «կա-

նայր» – жён(-ø) «կանանց», дочь «դուստր» – дочери «դուստրեր» – дочерей «դուստրերի», друг «ընկեր» – друзья «ընկերներ» – друзей «ընկերների», компания «ընկերություն» – компании «ընկերություններ» – компаний «ընկերությունների», ինչպես նաև՝ արական սեռի ձևաբանորեն մեկուսացված որոշ բառեր, օր.՝ сапожок «ձտքավոր կոշիկ» – сапожки «ձտքավոր կոշիկներ» – сапожек «ձտքավոր կոշիկների», глаз «աչք» – глаза «աչքեր» – глаз «աչքերի» և այլն:

3. Ուղղական հոլով, հոգնակի թիվ՝ –и, –я → սեռական հոլով՝ –ей / –ев, օր.՝ кость «ոսկոր» – кости «ոսկորներ» – костей «ոսկորների», море «ծով» – моря «ծովեր» – морей «ծովերի»: Այս խմբին են պատկանում նաև իգական և չեզոք սեռի ոչ գործուն –ья ածանցով ձևեր, ինչպես նաև փոքր քանակի արական սեռի գոյականներ՝ –а, –я հոգնակիակազմությամբ, օր.՝ тетрадь «տետր» – тетради «տետրեր» – тетрадей «տետրերի», дверь «դուռ» – двери «դռներ» – дверей «դռների», дерево «ծառ» – деревья «ծառեր» – деревьев «ծառերի» (Виноградов, 1986, 131):

4. Հոգնակի բառաձևերի զուգաձևությունները, ոճական տարբեր իրացումներն ու բովանդակային պլանի առանձնահատկությունները

Երբեմն հոգնակի թվակարգը ոչ միայն քանակայնորեն մեկից ավելին արտահայտելու միջոց է, այլ նաև ոճական հնար՝ տվյալ իրավիճակն ու երևույթը առավել պատկերավոր մեկնելու համար: Գրական արևելահայերենում համակարգային հոգնակիությունից շեղվում են **պարոն** և **տիկին** բառերը՝ զուգաձև հոգնակիի կազմության հնարավորությամբ, ինչպես՝ **պարոն – պարոններ** և **պարոնայք, տիկին – տիկիններ** և **տիկնայք**: Հոգնակիի այս կամ այն ձևի ընտրությունն ունի ոճական երանգավորում. **տիկնայք** և **պարոնայք** տարբերակները կիրառվում են հիմնականում պաշտոնական ոճի, ուղերձների մեջ՝ նախադասության մեջ հանդես գալով որպես կոչական: Հոգնակերտ **–եր, –ներ** վերջավորությունները հիմնականում բնորոշ են **–ի** արտաքին հոլովման պատկանող բառերին, առանձնանում են ոճային չեզոքությամբ, համատեքստով պայմանավորված՝ կարող են փոխարինել մյուս վերջավորություններին՝ տեքստին հաղորդելով ոճական որոշակի նրբերանգ, ինչպես՝ **գյուղացիք – գյուղացիներ**՝ բնորոշ գրական լեզվի բա-

Վեբ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

ռաձևերին: Որոշ բառերի դեպքում երկձև հոգնակի բառաձևերը ի հայտ են բերում իմաստատարբերակիչ նշանակություն, ինչպես՝ **մատենագրեր** (ձեռագիր մատյաններ) – **մատենագիրներ** (ձեռագիր մատյան գրողներ), **գազանակերեր** (կենդանու կեր) – **գազանակերներ** (կենդանի ուտողներ): Հաճախ բարդ բառերի միավանկ վերջին բաղադրիչն այնքան է հեռանում իր սկզբնական անվանական բուն իմաստից, կամ վերջին միավանկ բաղադրիչի իմաստային հատկանիշը հստակ չգիտակցվելով՝ ընդգրկում ավելի ընդհանրական բովանդակային ծավալայնություն, որ թվակազմության տեսակետից հնարավոր է դառնում – **ներ** մասնիկավորմամբ հոգնակիի կազմությունը, այսպես՝ **պետ – պետեր**, բայց **ցեղապետներ**, **վրանապետներ**, ինչպես նաև **ջրանցք – ջրանցքեր**, բայց **քղանցք – քղանցներ**, **լուսանցք – լուսանցքներ** կամ **կետ – կետեր**, բայց **տեսակետ – տեսակետներ**, **գիր – գրեր**, **ձեռագիր – ձեռագրեր**, բայց՝ **մատենագիր – մատենագիրներ**:

Գերմաներենում հոգնակիի կազմության երկձև՝ –e կամ –s մասնիկավորման հնարավոր կազմությամբ առանձնանում են արական սեռի հետևյալ գոյականները՝ der Balkon «պատշգամբ» – die Balkons, die Balkone «պատշգամբներ», der Beton «շին. բետոն», der Waggon «վագոն», – ment վերջածանցով չեզոք սեռի գոյականներ՝ das Abonnement «բաժանորդագրություն», das Reglement «ժողովակարգ», ինչպես նաև՝ –ier, –in վերջնաբաղադրիչով արական և չեզոք սեռի մի շարք գոյականներ՝ der Bankier «բանկի աշխատակից» – die Bankiers «բանկի աշխատակիցներ», նույն կերպ՝ das Metier «գործ, մասնագիտություն», der Gobelin «պատկերանկար գորգ», das Bulletin «անաշխատունակության թերթիկ» – die Bulletins «անաշխատունակության թերթիկներ»: Որոշ գոյականների դեպքում հոգնակիի կազմության երկձևություն նկատելի է և՛ հոգնակերտ համակարգային մասնիկավորմամբ, և՛ –ta վերջնաբաղադրիչի կցմամբ, ինչպես՝ das Komma «ստորակետ» – die Kommas / die Kommata «ստորակետներ», das Klima «կլիմա» – die Klimas / die Klimate «կլիմաներ/կլիմայական տիպեր», das Schema «սխեմա / ձևանմուշ» – die Schemas / die Schemata «սխեմաներ/ձևանմուշներ», das Thema «թեմա» – die Themen / die Themata «թեմաներ», das Album «ալբոմ» – die Alben / die Albums «ալբոմներ», das Pronomen «դերանուն» – die Pronomina / die Pronomen «դերանուններ», der Kaktus «կակտուս» – die Kaktusse / die Kakteen «կակտուսներ», der Konus «կոնաձև մարմին» – die Konusse / die Koni / die Konen «կոնաձև մարմիններ», das Lexikon «բառարան» – die Lexika / die Lexiken «բառա-

րաններ», das Konto «հաշիվ» – die Konti / die Kontos «հաշիվներ», das Etikett «պիտակ» – die Etiketten / die Etiketts «պիտակներ»: Նման դեպքերում անհրաժեշտ է խուսափել ավելորդաբանությունից՝ կրկնակի հոգնակիությունից, այսպես՝ das Schema – die Schemata կամ die Schemas, այլ ոչ թե die Schematas (Duden, 1998, 146): Վերոնշյալ երկձև կազմությունները կարող են միմյանց փոխարինել՝ առանց ոճական հատուկ տարբերությունների, իսկ որոշ դեպքերում միևնույն բառի հոգնակի թվի երկձև կազմությունը կարող է արտահայտել ոճական, ինչպես նաև բովանդակային հայեցակետի տարբերություններ, ինչպես՝ das Wort «բառ» – die Wörter «բառեր» – die Worte «կապակցված խոսք», das Tal «հովիտ» – die Täle «հովիտներ» (զեղարվեստական ոճ) – die Täler «հովիտներ» (չեզոք ոճ՝ այս պարագայում զուգաձևությունը կրում է ոճական բնույթ):

Հաճախ միայն բառի հոգնակի ձևն է դառնում համանունների իմաստատարբերակիչ եզրը, այսպես՝ der Band «գրքի հատոր» – die Bände «գրքի հատորներ», das Band «ժապավեն» – die Bänder «ժապավեններ», der Bauer «գյուղացի, հողագործ» – die Bauern «գյուղացիներ, շինարարներ», der Bund «միություն, դաշնություն» – die Bünde «միություններ, դաշնություններ», das Bund «փունջ» – die Bunde «փնջեր», der Flur «միջացք» – die Flure «միջանցքներ», die Flur «դաշտ» – die Fluren «դաշտեր»: Բերված օրինակները ցույց են տալիս, որ այս համանուն բառերը, եթե եզակի թվում սեռային տարբեր պատկանելիության միջոցով ցույց են տալիս բովանդակային պլանի տարբերությունները, ապա հոգնակիում, ձեռք բերելով սեռային չեզոքություն, իմաստային տարբերություններն արտահայտում են հոգնակիի՝ միմյանցից տարբեր ձևակազմությամբ:

Ռուսերենում ևս հոգնակիի երկձևությունները ցուցաբերում են ոճական տարաբնույթ իրացումներ: Այսպես՝ –ин մասնիկով գոյականը ունի հոգնակիի կազմության երկու ձև՝ իմաստային տարբեր նրբերանգներով՝ семьянин «ընտանիք սիրող մարդ» – семьянины «ընտանիքը սիրող մարդիկ»՝ որպես առանձին անհատներ և семьяне «նույն ընտանիքի անդամները»՝ որպես ամբողջություն (հավաքական իմաստով), зуб «մարդու ատամ» – зубы «մարդու ատամներ» – зубья «կենդանու ատամներ», лист «գրքի թերթ» – листы «գրքի թերթեր», листья «ծառի սաղարթ, տերևներ», камень «քար» – камни «քարեր» – каменья «քարքարոտ տեղանք, քարերի կույտ, հվք. քարքարոտություն», муж «տղամարդ, ամուսին» – мужи «հնցծ. այրեր» – мужья «ամուսիններ» և այլն: Երբեմն բառի տարբեր իմաստային իրացումները հատկապես ակնհայտ

Վեբ համահայկական հանդես, ժԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

են դառնում հոգնակիի ձևակազմության դեպքում, ինչպես եզակի և հոգնակի տարբերակ ունեցող *дух* «ոգի, հոգի» – *духи* «ոգիներ, հոգիներ» և համանուն՝ անեզական *духи*՝ «օծանելիք» գոյականի դեպքում, որտեղ վերջինս արտահայտում է թվակարգի հանդեպ չեզոք հասկացություն, իսկ շեշտը տեղակայվում է վերջին վանկի վրա: ունենք միայն անեզական, թվակարգի հանդեպ չեզոք հասկացություն, իսկ շեշտը կրում է վերջին վանկի ձայնավորը: *Время* «ժամանակ» գոյականը երկու դեպքում միայն ունի հոգնակի կիրառության հնարավորություն՝ *время* քերականական ժամանակաձևեր արտահայտելու՝ *формы времён глагола* «բայի ժամանակաձևեր» և գեղարվեստական ստեղծագործություններում երկար ժամանակ կամ տարվա եղանակներ բնութագրելիս՝ *времена, полные тревог и неясных предчувствий* «ժամանակներ՝ լի խուճապով ու տարտամ զգացողություններով»: *Лук* գոյականը մի դեպքում նշանակում է «աղեղ» և ունի, համապատասխանաբար, *луки* «աղեղներ» հոգնակի թվի բառաձև, մյուս դեպքում՝ բանջարեղենի տեսակ՝ «սոխ» և կիրառվում է առանց հոգնակի բառաձևի: Համանման ձևով գերմաներենում *der Geist* գոյականը «ոգի, հոգի» նշանակությամբ ունի հոգնակի բառաձև՝ *die Geister* «ոգիներ», իսկ «միտք, բանականություն» նշանակության դեպքում ունի միայն եզակի տարբերակ:

Ռուսերենում գոյականի եզակի և հոգնակի բառաձևերի համանունությունն հնարավոր է նաև բառերի ուղիղ և թեք հոլովների միջև, օր.՝ *внучек* «թոռ, թոռնիկ» բառի ուղղական հոլովի և *внучка* «թոռնուհի» գոյականի հոգնակի թվի թեք հոլովի արտահայտության պլանում: Նման դեպքերում ևս միայն նվազագույն համատեքստի կամ բառակապակցության շրջանակում է հնարավոր հասկանալ վերջինիս թիվն ու բովանդակային ծածկույթը:

«– Милый внучек, рада б, да не в силах: //Зелья те цветут не по лесам, //А в сырых могилах» («Թոռնիկ սիրելի, օգնել կուզեի, բայց անկարող եմ.//Դեղաբույսերն այդ չեն աճում անտառներում, // Այլ՝ գերեզմաններում խոնավ» – թարգմ. Ա.Ս.) (Бунин, 1967, 31):

Милый внучек բառակապակցության համաձայնեցումից (արական սեռ, բառի ուղիղ ձև, եզակի թիվ), ակնհայտ է բառի եզակի թվակարգով գործածումը, մինչդեռ հաջորդ օրինակում նույն բառաձևը հանդես է գալիս հոգնակի թվի սեռական հոլովով:

«Нашу старость мы встретим в глубоком кресле, в окружении внуков и внучек» («Մեր ծերությունը մենք կդիմավորենք խոր թիկնաթոռում՝ թոռների ու թոռնուհիների շրջապատում» – թարգմ. Ա.Ս.) (Бродский, 1972/1991, 122):

Զուգադրվող երեք լեզուներում գոյականի հոգնակի բառաձևերը կարող են ծառայել որպես հուզական–արտահայտչական ոճական հնար՝ ցրտեր – die Kälten – холода, նույն կերպ՝ небеса «երկինքներ», снега «ձյուններ»՝ այս կերպ արտահայտելով հասկացության ոչ թե քանակայնության փոփոխություն, այլ բառիմաստի սաստակցում: Այս երևույթը բնութագրվում է՝ որպես արտահայտչական հոգնակիություն (Плунгян, 2000, 281): Հոգնակին կարող է արտահայտել նաև ժամանակային անորոշություն և մոտավորություն, ինչպես՝ **մոտ ժամանակներս**: Որոշ դեպքերում այն նշում է թվակարգային անորոշություն, ինչպես նաև կարող է կիրառվել եզակի թվի փոխարեն, ինչպես՝ երեսունական թվականներին – die dreißiger Jahre – тридцатые годы (թվակարգային անորոշություն), у нас гости «հյուրեր ունենք» քանակայնությունը անորոշ է այնքանով, որ հյուրը գուցե և մեկն է:

Թվակարգի հոգնակի ձևերի իրացումը իրենց բուն, քանակայնության մեկից ավելի իմաստով հնարավոր է միայն թանձրացական, հստակ իրավիճակ ներկայացնող հասկացությունների դեպքում, որոնք ունեն սկիզբ և ավարտ և ենթարկվում են քանակական փոփոխությունների՝ պահպանելով իրենց ամբողջականությունը, առանձին–առանձին (Плунгян, 2000, 277):

Եզրակացություններ

Զուգադրվող երեք լեզուների՝ գրական արևելահայերենի, գերմաներենի և ռուսերենի նյութը ցույց է տալիս, որ գոյականի հոգնակի թվի կազմության հիմնական միջոցը մասնիկավորումն է: Գրական արևելահայերենում հոգնակի թիվը ձևավորվում է հիմնականում **–եր** և **–ներ** հոգնակերտների հավելումով հնչյունափոխ կամ անհնչյունափոխ հիմքով եզակի բառաձևին: Գերմաներենում հոգնակի թվակարգը կազմվում է բազմազան վերջավորություններով (–e, –en, –er, –s, գրոյական), հաճախ ուղեկցվում արմատական a, o, u ձայնավորների քմայնացմամբ, որոշ դեպքերում նաև շեշտի տեղափոխությամբ: Ռուսերենում հոգնակի կազմությունը ընթանում է համակարգային –ы/–и, –а/–я

մասնիկների կցմամբ, համադրվում շեշտի փոփոխությամբ, հնչյունների հերթագայությամբ կամ վերջնաբաղադրիչի տղմամբ կամ աձմամբ:

Գրական արևելահայերենում հոգնակիի կազմությունը ենթադրում է հոլովական հարացույցի միատարրություն, մինչդեռ գերմաներենում առանցքային է որոշյալ հոդի (der-die-das/die) հակադրությունը, ինչպես նաև գոյականի հոլովական տիպը և համապատասխան հոլովական վերջավորությունները, իսկ ռուսերենում տիպաբանական առումով առանձնանում են սեռական հոլովի հոգնակի ձևերը, որտեղ հոլովական վերջավորությունը միաժամանակ նշում է և՛ թիվը, և՛ հոլովը:

Երեք լեզուներում էլ հոգնակի թվակարգը երբեմն դառնում է ոչ միայն քանակային, այլ նաև ոճական և իմաստային նոր նրբերանգների դրսևորման միջոց՝ արտահայտելով հավաքականություն, հուզական սաստկացում, ժամանակային մոտավորություն, հաճախ դառնում նաև համանունների իմաստատարբերակիչ գործոն: Այս ամենը հնարավորություն է տալիս դիտարկել թվի կարգը ոչ միայն որպես պարզ քերականական կարգ, այլև ձևաբանական և իմաստաբանական բազմաշերտ համակարգ, որը, կազմության տեսակետից տարբեր կերպ իրացվելով գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում, դառնում է ոճական հնար և բառիմաստի ընդլայնման միջոց:

Այսպիսով՝ թվի կարգի, մասնավորապես՝ հոգնակիի համակարգի քննությունը ցույց է տալիս, որ այն կարևոր է ոչ միայն որպես ձևաբանական ենթահամակարգ, այլև բովանդակային ու ոճական լայն հնարավորություններ ապահովող լեզվական համալիր: Գրական արևելահայերենի, գերմաներենի և ռուսերենի գուգադրական քննությունը հնարավորություն է տալիս սահմանելու թվի կարգի կառուցվածքային ընդհանրություններն ու իմաստային տարբերությունները, ինչպես նաև ավելի հստակ ներկայացնելու, թե ինչ կերպ է հոգնակիի ձևի և իմաստի փոխազդեցությունը յուրաքանչյուր լեզվում արտացոլում առարկաների, երևույթների և խմբերի թվակարգային ոչ եզակի բնույթը:

Աննա Ս. Սողոմոնյան – Հետաքրքրությունների շրջանակը ներառում է գերմանագիտության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, գուգադրական քերականության խնդիրները: Հեղինակ է հինգ գիտական հոդվածի:

Օգտագործված գրականություն

1. **Աբրահամյան, Ս., Պառնասյան, Ն., Օհանյան, Հ.** (1974). *Ժամանակակից հայոց լեզու*, հտ. 2, Ձևաբանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
2. **Մարգարյան, Ա.** (2004). *Հայոց լեզվի քերականություն*, Ձևաբանություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն:
3. **Պետրոսյան, Հ.** (1972). *Գոյականի թվի կարգը հայերենում*, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն:
4. **Զահուկյան, Գ.** (1974). *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
5. **Duden.** (1998). *Schülerduden: Grammatik. Eine Sprachlehre mit Übungen und Lösungen* (Bearb. Peter Gallmann, Horst Sitta. 4. aktualisierte und erweiterte Auflage). Mannheim. Leipzig. Wien. Zürich.
6. **Eisenberg, P.** (2013). *Grundriss der deutschen Grammatik*, Band 1: Das Wort, Stuttgart, Verlag Metzler.
7. **Goethe, J. W. von.** (o. J.). *Die Leiden des jungen Werther* (Originalwerk veröffentlicht 1774). Projekt Gutenberg–DE. Abgerufen am 20. Dezember 2025, von <https://www.projekt-gutenberg.org/goethe/werther/werther.html>
8. **Helbig, G., Buscha, J.** (1996). *Deutsche Grammatik: Ein Handbuch für den Ausländerunterricht* (17. Auflage). Langenscheidt. Verlag Enzyklopädie.
9. **Wegener, H.** (2002). Aufbau von markierten Pluralklassen im Deutschen – eine Herausforderung für die Markiertheitstheorie. *Folia Linguistica*, 36(3–4), 261–295.
10. **Адмони, В.** (1986). *Теоретическая грамматика современного немецкого языка*, Москва: Просвещение.
11. **Бродский, И.** (1991). *Стихотворения*. Песня невинности, она же – опыта. Таллинн: Ээсти раамат; Александра. (Ориг. написано в 1972).
12. **Бунин, И.** (1967). *Собрание сочинений: в 9 т.* (Т. 8: *Стихотворения, 1918–1953*). Москва: Художественная литература.
13. **Виноградов, В.** (1986). *Русский язык: Грамматическое учение о слове* (3–е изд., испр.). Москва: Высшая школа.
14. **Есперсен, О.** (1958). *Философия грамматики*. Москва: Иностранная литература.
15. **Зализняк, А.** (2002). *Русское именное словоизменение*. Москва: Языки славянской культуры.
16. **Лекант, П.** (2001). *Современный русский литературный язык*. Москва: Высшая школа.
17. **Нестерова, Н.** (2010). *Фонетика – орфоэпия – словообразование в теории и журналистской практике: учебное пособие*. Томск: Томский государственный университет.

18. **Плунгян, В.** (2000). *Общая морфология: Введение в проблематику*. Москва: Эдиториал УРСС.

Bibliography (Latin Script)

1. **Abrahamyan, S., Paġnasyan, N., Ohanyan, H.** (1974). Zhamanakakits hayots lezu, h. 2, Dzevabanut'yun, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun. **(In Armenian)**.
2. **Admoni, V.** (1986). Teoreticheskaja grammatika sovremennogo nemetskogo jazyka, Moskva: Prosveshchenie. **(In Russian)**.
3. **Bunin, I.** (1967). Sbranie sochinenij: v 9 t. (T. 8: Stixotvorenija, 1918-1953). Moskva: Khudozhestvennaja literatura. **(In Russian)**.
4. **Brodskij, I.** (1991). Stixotvorenija. Pesnja nevinnosti, ona zhe - opyta. Tallinn: Eesti raamat; Aleksandra. (Orig. napisano v 1972). **(In Russian)**.
5. **Duden.** (1998). Schuelerduden: Grammatik. Eine Sprachlehre mit Uebungen und Loesungen (Bearb. Peter Gallmann, Horst Sitta, 4. aktualisierte und erweiterte Auflage). Mannheim, Leipzig, Wien, Zuerich. **(In German)**.
6. **Eisenberg, P.** (2013). Grundriss der deutschen Grammatik, Band 1: Das Wort. Stuttgart: Verlag Metzler. **(In German)**.
7. **Goethe, J. W. von.** (o. J.). Die Leiden des jungen Werther (Originalwerk veroeffentlicht 1774). Projekt Gutenberg-DE. Abgerufen am 20. Dezember 2025 von projekt-gutenberg.org/goethe/werther/werther.html **(In German)**.
8. **Helbig, G., Buscha, J.** (1996). Deutsche Grammatik: Ein Handbuch fuer den Auslaenderunterricht (17. Auflage). Langenscheidt: Verlag Enzyklopaedie. **(In German)**.
9. **Jahukyan, G.** (1974). Zhamanakakits hayereni tesut'yan himunk'nerë, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun. **(In Armenian)**.
10. **Jespersen, O.** (1958). Filosofija grammatiki. Moskva: Inostrannaja literatura. **(In Russian)**.
11. **Lekant, P.** (2001). Sovremennyj russkij literaturnyj jazyk. Moskva: Vysshaja shkola. **(In Russian)**.
12. **Margaryan, A.** (2004). Hayots lezvi k'erakanut'yun: Dzevabanut'yun, Yerevan, Yrevani hamalsarani hratarakch'ut'yun. **(In Armenian)**.
13. **Nesterova, N.** (2010). Fonetika - orfoepija - slovoobrazovanie v teorii i zhurnalistskoj praktike: uchebnoe posobie. Tomsk: Tomskij gosudarstvennyj universitet. **(In Russian)**.
14. **Petrosyan, H.** (1972). Goyakani t'vi kargë hayerenum, Yerevan, Yerevani hamalsarani hratarakchut'yun. **(In Armenian)**.
15. **Plungjan, V.** (2000). Obshchaja morfologija: Vvedenie v problematiku. Moskva: Editorial URSS. **(In Russian)**.

16. **Vinogradov, V.** (1986). Russkij jazyk: Grammaticheskoe uchenie o slove (3-e izd., ispr.). Moskva: Vysshaja shkola. **(In Russian).**
17. **Wegener, H.** (2002). Aufbau von markierten Pluralklassen im Deutschen - eine Herausforderung fuer die Markiertheitstheorie. Folia Linguistica, 36(3-4), 261-295. **(In German).**
18. **Zaliznjak, A.** (2002). Russkoe imennoe slovoizmenenie. Moskva: Jazyki slavjanskoj kul'tury. **(In Russian).**